





















(նոյն տեղում):

59 Վ. Մ. Մարտիրոսեան, *Հայ եւ վրաց ժողովուրդների համագործակցութիւնը...*, էջ 95:

60 Նոյն տեղում, էջ 93:

61 Նոյն տեղում, էջ 93-94: Այդ խոստում-առաջարկը պէտք է դիտել անիրական, քանզի, ինչպէս հանրայայտ է, Պետրոս I-ի եւ Վախթանգի միջեւ հաստատուած կապերի եւ Չոլակի մօտ կայանելու մասին տեղեկանալով, շահ Թահմազ II-ը անմիջապէս նրան մեղադրեց պետական դաւաճանութեան մէջ եւ հրամանով զրկեց Քարթլիի վալիի ու իրանական զօրահրամանատարի իրաւունքներից: Ծահը այդ պաշտօնները յանձնեց նրա հակառակորդին՝ Կախեթի Կոստանդին թագաւորին (Մուհամմադկուլի խան): Զօրահրամանատարութեան հետ մեկտեղ վերջինիս յանձնեց նաեւ Երեւանի, Գանձակի ու Ղարաբաղի բեկլարբեկութիւնները: 1722 թ. վերջերից զինաբախման մէջ մտնելով Վախթանգի հետ, 1723 թ. մայիսին Մուհամմադկուլի խանը արդէն գրաւեց Թիֆլիզը, իսկ Վախթանգը ստիպուած էր հեռանալ Ռուսաստան:

62 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. IV, էջ 147:

63 Վ. Բ. Բարխուդարեան, Վ. Կ. Ոսկանեան, *Հայրուսական պատմական կապերը եւ Արեւելեան Հայաստանի միացումը Ռուսաստանին*, Երեւան, 1978, էջ 93:

64 Պ. Չորանեան, *Վրաց ուղեգրութիւնները...*, էջ 16-22:

65 П. П. Бушев, *Посольство Артемия Волынского в Иран в 1715-1718 гг. (по русским архивам)*. Москва, "Наука", 1978, ст. 23, 29:

66 П. П. Бушев, *Посольство...*, ст. 220-223, 265. Ա. Վոլինսկու անտարբեր մեան վերաբերմունքի բողոքում էր նաեւ Միհաս վարդապետը՝ Պետրոս I-ին գրած զեկուցագրում ու հաշուետւթիւններում. «զմեզ էլչուն ումուսովն ուղարկեցին, մա հէջ մեզ մտիկ չի տար» (տե՛ս *Армяно-русские отношения в первой трети XVIII века (Сб. док.)*, т. II, ч. I, ст. 365; հմմտ. նոյն տեղում, էջ 366, 369):

67 *Русско-индийские отношения в XVIII веке*, (Сб. док.), Москва, 1965, ст. 47-48:

68 *Армянское войско в XVIII веке*. Из истории армяно-русского военного содружества (исследование и документы), подготовил к изданию А. Н. Хачатрян, Ереван, 1968, ст. 80-84.

69 *Армяно-русские отношения в первой трети XVIII века (Сб. док.)*, т. II, ч. I, под редакцией Ашота Иоаннисяна, Ереван, 1964, ст. XXXI; հմմտ. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. IV, Հայ ժողովուրդը ֆէոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ., Երեւան, 1972, էջ 147-149:

70 Վ. Մ. Մարտիրոսեան, *Հայ եւ վրաց ժողովուրդների համագործակցութիւնը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թուականներ)*, Երեւան, 1971, էջ 103:

71 *Армяно-русские отношения*, IV, ст. 239:

72 *Армяно-русские отношения*, IV, ст. 241:

73 *Армяно-русские отношения*, IV, ст. 299:

74 Նոյն տեղում:

75 յևժ, II, թջ. 463-464.

76 *Армяно-русские отношения...*, IV, ст. 31; հմմտ. А. Р. Иоаннисян, *Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия*, Ереван, 1990, ст. 131-132.

77 Ի հեճուկս Գ. Ա. Պոստեմկինի սպասումների, Այի Մուրադ խանը այդ առիթով դիւանագիտորէն պատասխանել էր Ռուսական արքունիքի յանձնարարութեամբ դեսպանութեամբ Սպահան ժամանած Յակոբ Անտոնեանին, թէ՛ «Естли государыни угодно просить у меня области или города под протекцию, то я по благодсти божией имею власть и силу разделить всю Персию пополам в ея владение, однакож, будучи я довольно известен, что государыня имеет весьма достаточны города и места, я не думаю, чтоб она просила области» (Армяно-русские отношения..., IV, ст. 301).

78 *Армяно-русские отношения...*, IV, ст. 345.

79 *Ս. Բուրնաշեի 1787 թ. յուլիսի 8-ի նամակը տե՛ս օ. Երեւանի մասին*. Ձեռագրերի թանգարանի հրատարակած «Յուրաքանչյուր» թ. 23-24, տժ., 1970, թջ. 116.

80 ЦГВИА, ф. 52, оп. 1/194, д. 416, ч. I, л. 363об. (ընդգծ. մերն է – Պ. 2.): Հմմտ. А. Р. Иоаннисян, *Россия...*, ст. 182-183: օ. Երեւանի մասին ձեռագրերի թանգարանի հրատարակած «Յուրաքանչյուր» թ. 120-121.

81 *Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х - начало 90-х годов XVIII в.)*: Документы и материалы, вып. I, материалы подобрал и подготовил к печати Р. Ы. Гамрекели, Тбилиси, 1980, ст. 212-213.

82 А. Р. Иоаннисян, *Россия...*, ст. 181-182.

83 Յ. Նամեսեան, *Վրաց-աբխազական խառնուրդի յարաբերութիւնները*, Երեւան, 1973, թջ. 121.

84 Ա. Ռ. Յովհաննիսեանը իրաւացիորէն այդ որակում է որպէս «Գեորգիեան պայմանագրի կոպտագոյն խախտում: Վրաստանը, փաստորէն, մտտուեց բախտի քմահաճոյքին» (А. Р. Иоаннисян, *Россия...*, ст. 188):

85 А. Р. Иоаннисян, *Россия...*, ст. 189.

86 Н. С. Куканова, *Освобождение*, "Иран", М., 1973, ст. 191.

ԳԱՐԵԳԻՆ ՆԺՌԵՀԻՆ՝ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԺԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՈԳԵԾՆՉՈՂՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

Ուֆայել Համբարձումեան

«1918 թ. մայիսի վերջերին վարել եմ Ղարաքիլիսէի ճակատամարտը: Վիրաւորել եմ, ներկայացուել ամենաբարձր քաջութեան շքանշանի: Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսէի ճակատամարտի ոչ թէ օրուայ խ. Հայաստանը, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէիք ունենայ: Ղարաքիլիսէի ետօրեայ հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատեան հայութիւնը եւ հիմը դրեց Հայկական պետութեան»:

Ինքնակենսագրութիւն

*Ղարաքիլիսայի ճակատամարտի առանցքային նշանակութեան մասին Նժդեհի արտայայտած այս միտքը ժամանակի բազմաթիւ աղբիւրներից վկայուած իրողութիւն է: Բոլոր ժամանակակիցներն անխտիր Ղարաքիլիսան դնում են Սարղարապատի կողքին՝ յաճախ աւելի կարեւորելով, քան Սարղարապատը:*

Բայց, ցաւօք, այս իրողութիւնները մեր պատմագիտութեան մէջ արձանագրուած չեն իբրեւ պատմական փաստ: Ընդհանրապէս առանց վարանելու կարելի է պնդել, որ Ղարաքիլիսայի ճակատամարտի վճռորոշ դերի ու նշանակութեան բացայայտումը Հայ պատմագիտութեան չուսումնասիրուած խնդիրներից է: Յատուտումնասիրուած խնդիրներից է: Կապէս՝ չի շեշտուում այն բազմիցս վկայուած իրողութիւնը, որ Ղարաքիլիսայի ճակատամարտի ոգեշնչողն ու կազմակերպիչը Գարեգին Նժդեհն էր, ինչպէս Սարղարապատինը՝ Գէորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Հայաստանեայց Եկեղեցին: Դրա հիմնական պատճառն այն է, որ նախ՝ ճակատի պետը Բէյ-Մամիկոնը նեան էր, իսկ հրամանատարների մէջ էին բազմաթիւ նշանաւոր բարձրաստիճանի սպաներ՝ Ղորղանեանից սկսած, Սահան սպաներ՝ Ղորղանեանից սկսած, մարտիկներից ու Ղամազեանով (Համազեան – Ռ. Հ.), վերջացրած, իսկ Նժդեհն այդ ժամանակ պորուչիկի աստիճան ունէր: Ժամանակ պորուչիկի աստիճան ունէր: Եւ երկրորդ՝ Հարցը չի ուսումնասիրուած

այդ տեսանկիւնից, քանի որ Գարեգին Նժդեհի անունը 1921-1990 թթ. փակի տակ էր խորհրդային Հայաստանում:

Ժամանակակիցների յուշերից եւ աշխատութիւններից բերուած վկայութիւններով նախ թուրքիկ ներկայացնեք Ղարաքիլիսայի առանցքային դերը 1918 թ. Հայկական մղած առիւծամարտում, ապա անդրադառնաք խումասպահար փախչող բազմութիւններին ու հայ զօրքին ոգեշնչելու եւ դէպի ճակատ մղելու մէջ Գարեգին Նժդեհի վճռական դերակատարութեանը: Ընդ որում այդ դերակատարութիւնը Հաստատող աղբիւրների մեծ մասը Ղարաքիլիսայի ճակատամարտին նուիրուած գիտական աշխատութիւններում շրջանառութեան մէջ չի դրուած:

Որեւէ կասկածից վեր է, որ թուրքական յարձակման հիմնական նպատակներից մէկը Հայկական իր պատմական հայրենիքի այդ մասից եւս վտարելն էր, որով «այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէիք ունենայ»:

Դէպքերին ժամանակակից եւ ազատամարտի կազմակերպիչներից մէկը՝ Կատարեան, խօսելով 1918 թ. գարնարը Հայաստանի վրայ թուրքական յարձակման մասին, գրում է. «Թուրքական ճակատի յարձակողականի ուղղութիւնները մեր երեւակայածէն շատ աւելի ճարրը մեր երեւակայածէն շատ աւելի թետարութեամբ կը զարգանային: Մէկ թետարութեամբ կը զարգանային: Մէկ թետարութեամբ կը զարգանային»: